ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀԶՀ-ՇՀԱՊՁԲ-15/12-16/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «13» ապրիլի 2016թ.

2016թ-ի ապրիլի 13-ին՝ ժամը 10:30-ին, Հայաստանի զարգացման հիմնադրամի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեում, տեղի ունեցավ ՀԶՀ-ՇՀԱՊՁԲ-15/12-16/1 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Լիլիթ	Գինոսյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի իրավաբան.
Լուսինե	Գալստյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի միջոցառումների կազմակերպման մասնագետի ժ/պ.
Ալեքսանդր	Նազարյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի կազմակերպատնտեսական հարցերով մասնագետ.

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Անի	Բազեյանը	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի գնումների մասնագետ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լիլիթ Գինոսյանը, իսկ քարտուղարն էր՝ Անի Բազեյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՋՀ-ՇՀԱՊՁԲ-15/12-16/1 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց և վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման մասին:

2. Մասնակիցների կողմից առաջարկված գների, առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ՀՋՀ-ՇՀԱՊՁԲ-15/12-16/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Լիլիթ Գինոսյանը նշեց, որ գնման առարկայի 1-ին չափաբաժնի ընդհանուր (նախահաշվային) գինը կազմում է 1 200 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղար Անի Բազեյանը հայտնեց, որ՝

- ՀՋՀ-ՇՀԱՊՁԲ-15/12-16/1 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձիք (այսուհետ՝ նաև մասնակիցները).

Հ/հ	Մասնակցի անվանում	Մասնակցի գտնվելու վայրը
1.	«Մագնատէս» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 51, բն. 14
2.	«ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Խանջյան 41/1

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիցները հայտերը պարունակող ծրարները կազմել և ներկայացրել են ՀՋՀ-ՇՀԱՊՁԲ-15/12-16/1 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերի (այսուհետ՝ հրավեր) պահանջներին համապատասխան.
- Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.
- Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.

Որոշվեց՝

1. Լիլիթ Գինոսյանի և Անի Բազեյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

2. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ, ԱՌԱՋԻՆ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակիցները ներկայացրել են հետևյալ գները՝ առանց ԱԱՀ.

Չափա-բաժնի համարը	Ապրանքի անվանումը	Մասնակիցների անվանումները և առաջարկած գները՝ (ՀՀ դրամ)	
		«Մագնատէս» ՍՊԸ	«ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ
1.	Թվային լուսանկարչական ապարատ	660 000	470 000

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին և երկրորդ տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչել համապատասխանաբար «ՋԻ ՎԻ ԷՆ» և «Մագնատէս» ընկերություններին.
2. Անի Բազեյանին՝
1) Ծանուցել «ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ-ին ներկայացնել առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի նախահաշվային գնի 75%-ից ցածր առաջարկված գնի հիմնավորումը:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին

Որոշվեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 49-րդ կետով սահմանված փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 10:30-ին:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Գինոսյան _____

Հանձնաժողովի անդամ՝

Լ. Գալստյան _____

Ա. Նազարյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Բազեյան _____